Mastercard x Glovo

Հատուկ առաջարկ Mastercard®-ի քարտապանների համար

Mastercard քարտապանների համար նախատեսված ամանորյա արշավի նկարագիր

Հատուկ առաջարկ Mastercard-ից և Glovo-ից Mastercard քարտապանների համար

Մասնակցության պայմաններ՝

Սույն թվականի Դեկտեմբերի 12-ից մինչև 2025թ-ի Հունվարի 7-ը Glovo-ում Mastercard քարտերով ամենաշատ գնումներ(հիմք է ընդունվում գործարքների քանակը, ոչ թե ծավալը) կատարած օգտատերերը հնարավորություն կունենան ստանալու պարգևատրումներ: Արշավը իրականացվում է 3 փուլով՝

- **Առաջին փուլ՝ 12/12/2024(00:00) – 19/12/2024 (23:59) — Երեք մրցանակային տեղ**

  Առաջին տեղի մրցանակ՝ iPhone 16

  Երկրորդ տեղի մրցանակ՝ Apple Watch SE 2

  Երրորդ տեղի մրցանակ՝ AirPods Pro 1st gen

- **Երկրորդ փուլ՝ 20/12/2024(00:00) – 30/12/2024 (23:59) – Երկու մրցանակային տեղ**

  Առաջին տեղի մրցանակ՝ Sony PlayStation PS5 Slim 1TB

  Երկրորդ տեղի մրցանակ՝ 500 EUR Glovo վաուչեր (Վաուչերի գործողության ժամկետ՝ 3 ամիս)

- **Ամփոփիչ փուլ՝ մինչև 07/01/2025 (23:59) — Մեկ մրցանակային տեղ**

  Գլխավոր մրցանակ՝ Ավտոեքենա Sena E400

* Եզրափակիչ փուլում գլխավոր մրցանակակրի ընտրության համար հիմք է ծառայելու արշավի ամբողջ ընթացում՝ դեկտեմբերի 12-ից մինչև հունվարի 7-ը ընկած ժամանակահատվածում, օգտատիրոջ կողմից Mastercard քարտով Glovo-ում իրականացրած գնումների հանրագումարային արդյունքը:

Պայմաններ և դրույթներ

- Արշավին իրավասու են մասնակցել բոլոր Glovo օգտատերերը, որոնք գործարք կիրականացնեն Mastercard քարտերով, այդ թվում՝ բիզնես քարտերով:
- Գործարք է համարվում Glovo օգտատիրոջ կողմից Glovo-ում Mastercard քարտերով իրականացված գործարքները (անկախ վճարային գործիքի՝ Mastercard քարտերի քանակից): Այլ վճարային համակարգի քարտերով իրականացված գործարքները, ինչպես նաև չեղարկված գործարքները չեն դիտարկվի որպես գործարք:
- Արշավը տարածվում է Glovo-ի ցանկացած կատեգորիայում իրականացված վճարումների վրա:
- Արշավը տարածվում է նաև Google Pay-ի կամ Apple Pay-ի միջոցով կատարված վճարումների վրա:
- Մեկ գործարքի նվազագույն չափ՝ 3,000 ՀՀ դրամ:
- Արշավի շրջանակներում մրցանակները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը իրականացվում է Կազմակերպչի կողմից:
- Glovo-ի ինստագրամյան էջում շաբաթական երկու անգամ կհրապարակվեն հրապարակման պահի դրությամբ առաջատար մասնակիցների անունները, որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենան հետևել ընթացիկ արդյունքներին:

Արշավի ամփոփման պայմաններ

- Առաջին փուլի արդյունքում հաղթող ընտրված օգտատերերի անունները կհրապարակվեն դեկտեմբերի 20-ին Glovo-ի ինստագրամյան էջում՝ սթորի բաժնում:
- Երկրորդ փուլի արդյունքում հաղթող ընտրված օգտատերերի անունները կհրապարակվեն դեկտեմբերի 31-ին Glovo-ի ինստագրամյան էջում՝ սթորի բաժնում:
- Եզրափակիչ փուլի արդյունքում հաղթող ընտրված օգտատիրոջ անունը կհրապարակվի հունվարի 9-ին Glovo-ի ինստագրամյան էջում՝ սթորի բաժնում:

- Արշավի արդյունքում հաղթող ճանաչված օգտատերերը հաղթող ընտրվելու մասին կտեղեկացվեն նաև էլ. փոստի և հեռախոսազանգի միջոցով:
- Եթե հաղթող ճանաչված օգտատերը չպատասխանի հեռախոսազանգին կամ չարձագանքի էլ. նամակին, Glovo-ի իրավասու թիմը մեկ ամվա ընթացում կշարունակի փորձել կապ հաստատել վերջինիս հետ, որից հետո՝ չհաջողելու դեպքում, մրցանակն անցնում է ամենաշատ գործարք իրականացրած հաջորդ օգտագիրոջը:
- Առաջին փուլի արդյունքում հաղթող ընտրված օգտատերերը իրավասու չեն ընտրվելու երկրորդ փուլի հաղթողներ, մինչդեռ թե՛ առաջին, թե՛ երկրորդ փուլի հաղթող օգտատերերը իրավասու են մասնակցելու եզրափակիչ փուլին և ստանալու գլխավոր մրցանակը:
- Հաղթող օգտատեր ընտրվում է ըստ գործարքների քանակի, ոչ թե ծավալի, սակայն եթե ամփոփման արդյունքում մրցանակային տեղերի համար լինեն հավասար քանակով գործարքներ իրականացրած օգտատերեր, ապա նախապատվությունը կընտրվի տվյալ ժամանակահատվածում հանրագումարային ամենամեծ ծավալով գործարքներ իրականացրած օգտատիրոջը:
- Արշավի շրջանակում յուրաքանչյուր օգտատիրոջ կտրամադրվի առավելագույնը մեկ մրցանակ(բացառություն է կազմում միայն գլխավոր մրցանակը):
- Մրցանակները ենթակա չեն փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:
- Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված մրցանակի որակի և մատուցված ծառայության համար:
- Արշավի մասնակիցները և հաղթողները հաստատվում են Կազմակերպչի կողմից՝ անհրաժեշտության դեպքում օգտագիրոջ նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը, հաղթող ընտրվելու դեպքում՝ խնդրել ներկայացնել անհրաժեշտ անձնական տվյալներ: Եթե օգտատերը հրաժարվում է ներկայանալ, տրամադրել նախատեսված անձնական տվյալներ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:
- Օգտատերերը հնարավորություն ունեն մրցանակը ստանալ մինչև 2025 թ.-ի փետրվարի 28-ը: Նշված ժամկետից հետո մրցանակը ենթակա չէ տրամադրման:
- Հաղթող մասնակից կարող են ճանաչվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:
- Glovo- ի և Mastercard-ի աշխատակիցները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել արշավին:
- Glovo-ի Աջակցման թիմը կաջակցի և կվերահսկի ողջ գործընթացը:

Ծնրհակալություն